ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանը շնորհավորել է եզդիական համայնքին Սուրբ Խըդըր Նաբիի տոնի առթիվ

21.02.2020

Ի դեմս Արմավիրի մարզի եզդի ազգաբնակչության՝ ի սրտե և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ ողջ եզդիական համայնքին Սուրբ Խըդըր Նաբիի տոնի առթիվ:

Տոն, որի հետ դարեր շարունակ կապվում է եզդի ժողովրդի իղձերի, ցանկությունների և նպատակերի իրականացումը, և որը կարևոր տեղ ունի եզդիների հոգևոր դաստիարակության, ազգային ինքնության պահպանման և համերաշխության գործում:

Այս բարություն, սեր ու միասնություն խորհրդանշող տոնական օրվա առթիվ ցանկանում եմ, որ հարատևեն մեր բարեկամ եզդի ժողովրդի հոգևոր և աշխարհիկ արժեքները, որոնք դարեր շարունակ բնորոշում են նրանց ինքնությունն ու ազգային դիմագիծը:

Սիրելի եզդիներ, թող ձեր կյանքում գերիշխի խաղաղությունը, ուրախությունն ու հաջողությունը: Ամենայն լավն ու բարին բոլորիդ: